



ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. — ՊԱՏՄԱԿԱՆ
ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

1843-1897 ՀԱՏՈՐ ԾԵ ՄԱՐՏ


ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԷՊ

Ի ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ Մ ԽՈՐԵՆԱՅԻՈՑ

ՓՈՐՉ ՔՆՆԱԳԱՏՈՒԹԵԱՆ ԱՂԲԵՐՄՅՑ

(Ներածութիւն. տես հոտ. ԾԳ, յէջ 540)



ՄԻՆԶԻԵՒ Մար-Աբասայ ուսումնասիրութիւնն այնպիսի աշխուժով կը զարգանայր, խորենացոյ միւս աղբերքն՝ որ նոյն իսկ պատմագրին աւսելով թուով գրեթէ երեսուն էին, կարծես թէ ստուերի մէջ մնացին, որով դիտնականաց ուշադրութիւնն ալ խիստ սակաւ կը վայելէին: Միայն 1861 տարւոյն՝

մեր (Ռուսաց) Գիտութեան ճեմարանի ուսումնասիրութիւնց մէջ յերեւան եկաւ Վիկտոր Լանդուայի « Ուսումնասիրութիւն Մոյսիսի խորենացոյ Հայոց Պատմութեան աղբերաց վրայ », (Etude sur les sources de l'Histoire d'Arménie de Moïse de Khoren): Այս ուսումնասիրութեան մէջ՝ հեղինակն մի առ մի կը թուէր Մովսիսի յիշած բոլոր աղբերները, ոչ թէ միայն իրբեւ ճշմարտապէս գոյութիւն ունեցող, այլ նոյն իսկ իրբեւ հայ պատմագրին ձեռքը զանուած բաներ: Եւ են՝ Աբիգենտոս, Բազմավէպ, Բերուսոս, Հիպոլոյիտ, Փլեգոն, Կամարոս, Եւազր, Աբիստոն Պելլացի, գնոսաիկեան Բարդեժանն, և այլն: Միանգամայն, Լանդուան, յիշեալ պատմագիրներու ընծայուած՝ հայոց պատմութեան վերաբերոյ՝ երկասիրութեանց, դասական մատենագրաց մօտ անյիշատակ մնա-